

Հայաստանի Հանրապետության
Արագածոտնի Մարզպետարանի
Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարչությանը
shabat.am լրատվական կայքի
լրագրող Անուշ Մուրադյանից

Դիմում


Shabat.am լրատվական կայքը պատրաստում է հոդված, որի համար անհրաժեշտ է *
տեղեկատվություն:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կարիքների համար կապալային աշխատանքների
կատարման Պետական գնման պայմանագրի համաձայն, որը կնքվել է 2017թ-ի
օգոստոսի 4-ին (պայմանագրի հղումը՝ <file:///C:/Users/Anush/Downloads/28.PDF>) 2017
թ-ի նոյեմբերից սկսվել է Կարավաձորի մշակութային տան վերանորոգումը, որի
համար տրամադրվել է 10. 848.000 դրամ:

Հարցեր.

1. Ի՞նչ փուլում է գտնվում շինարարությունն այս պահին:
2. Եինարարական ի՞նչ խնդիրներ է ունեցել մշակութային տունը, որոնք այս պահի
դրությամբ կարգավորվել են :
3. Խնդրում եմ տրամադրել եսև արդեն կատարված ծախսերի ցանկը:
4. Երբ է նախատեսվում շինարարության ավարտը:

Կանխավ Շնորհակալություն:



Տնօրեն Ս. Հարությունյան

shabat.am: Հեռ. +37493037373, Էլ. հարցի info@shabat.am

ՇԻՔ
«Արագածոտնի մարզպետարանի
աշխատակազմի քա. տնտեսա-
բյան ընդհանուր բաժնի
05.03.2018
Մուրադյան Ա. 5/1607-18»



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Հեռ/Ֆաքս (+374 232) 3 22 51
0201 г. Аштарак, В.Петросяна 4, тел /факс (+374 232) 3 22 51
0201 с. Ashtarak, V.Petrosyan 4, tel /fax (+374 232) 3 22 51 e-mail aragatsotn@mta.gov.am

N _____

Ի պատրասխան Ձեր 05.03.2018թ. գրության

Shabat.am լրատվական կայքի
լրագրող Անուշ Մուրադյանին

Տեղեկացնում ենք, որ Կաքավաձորի մշակույթի տունը ուներ հատակների վերանորոգման, ներքին հարդարման, տաք և սառը ջրի ջրամատակարարման և ջրահեռացման, օդափոխության, դահլիճի ջեռուցման, ներքին էլեկտրամատակարարման աշխատանքների կատարման անհրաժեշտություն:

Ելնելով նշված խնդիրների լուծման անհրաժեշտությունից Կաքավաձորի մշակույթի տան վերանորոգման խնդիրը ընդգրկվել էր մարզում հրատապ խնդիրների ցանկում և կայացած մրցույթի արդյունքում 2017թ. օգոստոսի 4-ին կնքված ՀՀ ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ 17/01-28 պայմանագրի սահմաններում <<Արա-Արաքս Գրուպ>> ՍՊԸ-ն մինչև 2017թ. նոյեմբերի 1-ը կատարել և ավարտել է շինվերանորոգման պայմանագրով նախատեսված աշխատանքների ծավալները:

Հարգանքով՝

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ